

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԲԱՆԿԵՐԸ ԽԹԱՆՈՒՄ ԵՆ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ



Մարտունու քաղաքացիները սնունդ են նվիրաբերում ԵԲ բարեգործական գամբուլդին



Ֆուտբոլիստները նվիրատվություն են կատարում խաղի ավարտից հետո



Արարատի ԵԲ անդամները օրիգամի թռչուններ պատրաստելիս



Վանաձորի ԵԲ անդամները հանձնում են հավաքված խաղալիքները գիշերօթիկ դպրոցին

Երիտասարդական Բանկերը հաջողությամբ տարածում և խթանում են բարեգործության մշակույթն իրենց համայնքներում: Գարնանը Երիտասարդական Բանկի տարբեր կոմիտեներն օգնել են մի շարք անապահով ընտանիքների՝ Ջատկի տոնի նախօրեին կազմակերպելով «Սննդի Բանկ» բարեգործական միջոցառումը: Միջոցառման ընթացքում Գյումրիի, Երևանի, Եղեգնաձորի և Մարտունու Երիտասարդական Բանկերը հավաքեցին 1800 ԱՄՆ դոլարին համարժեք սնունդ և նվիրեցին այն իրենց համայնքներում ապրող 120 ընտանիքների: [Գնահատելով բարեգործության մշակույթի տարածումը տեղի երիտասարդների կողմից՝ Մարտունու «Զանգակ» տեղական հեռուստաընկերությունը տեսանյութ է պատրաստել բարեգործական միջոցառման մասին:](#)

Երևանի Երիտասարդական Բանկի կողմից ֆինանսավորված ծրագրի շրջանակներում կազմակերպվեց բարեգործական ֆուտբոլային խաղ ֆեյսբուքյան երկու երիտասարդական խմբերի միջև: Սոցիալական ցանցերում խաղը գովազդելու արդյունքում խաղին մասնակցեց 200 հանդիսական: Նրանք եկել էին խաղին, որպեսզի օգնեն «Հայ Չմեռ Պապ» բարեգործական հիմնադրամի շահառու [Կարապետյանների ընտանիքին:](#)

Արարատի Երիտասարդական Բանկի անդամներն աջակցեցին Ճապոնիայի երկրաշարժից տուժածներին: Բարերարներից մեկի պատվերով նրանք պատրաստեցին օրիգամի թռչուններ: Այնուհետև բարերարը երիտասարդների պատրաստած յուրաքանչյուր թռչնի համար ցուցաբերեց դրամական աջակցություն, որն ուղարկվեց Ճապոնիայի ժողովրդին:

Վանաձորի Երիտասարդական Բանկի անդամները կազմակերպել էին «Մեկ խաղալիք մեկ ժպիտի դիմաց» ակցիան, որի ընթացքում հավաքում էին մանկական խաղալիքներ: Հունիսի 1-ին՝ երեխաների պաշտպանության միջազգային օրը, Երիտասարդական Բանկի անդամները հավաքված խաղալիքները նվիրեցին տեղի գիշերօթիկ դպրոցին և մանկապարտեզներին: Բացի այդ, Վանաձորի երիտասարդները նախաձեռնել էին «Բազմազանության օր» ֆլեշմոբ միջոցառումը՝ կարևորելով մարդկանց հարգալից վերաբերմունքը բազմազանության նկատմամբ:

Դիլիջանի Երիտասարդական Բանկի անդամները քաղաքի երեխաների համար կազմակերպեցին «Պայծառ օր» միջոցառումը: Երեխաները դուրս եկան փողոց, խաղացին, մրցեցին, պարեցին, երգեցին, ինչպես նաև նկարեցին դրական ու վառ պատկերներ իրենց մանկությունից՝ օգտագործելով Երիտասարդական Բանկի տրամադրած ներկերն ու կավիճները: Երիտասարդների նախաձեռնությանը միացան նաև Դիլիջանի քաղաքապետարանը և մշակույթի կենտրոնը՝ տրամադրելով միջոցառման անցկացման համար անհրաժեշտ սարքավորումներ: Դիլիջանցիները ցանկություն հայտնեցին, որ Երիտասարդական Բանկի այս միջոցառումը դառնա ամենամյա, քանի որ քաղաքի երեխաները չունեն ժամանցի կազմակերպման լայն հնարավորություններ:



MINISTRY FOR FOREIGN AFFAIRS OF FINLAND



**REAL MONEY
REAL LIVES
REAL CHANGE**

ԱՎԵԼԻ ՔԱՆ 1000 ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿՆԵՐԳՐԱՎԿԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՕՐԱԳՐԵՐՈՒՄ

Հայաստանի Երիտասարդական Բանկ կոմիտեները շարունակում են դրամաշնորհների տրամադրումը՝ իրենց համայնքներում ներգրավելով երիտասարդների նոր խմբեր: Երիտասարդական Բանկի հայտարարած դրամաշնորհային մրցույթի նոր փուլի արդյունքում Բանկը ստացավ 305 դրամաշնորհային դիմում-առաջարկ: Ստացված դիմումներից 165-ի հեղինակները հրավիրվեցին հարցազրույցի: Օրագրերի գնահատման փուլից հետո ֆինանսավորվեց 48 ծրագիր: Համայնքային ծրագրերի հիմնական թեմաները վերաբերում էին շրջակա միջավայրի պաշտպանությանը, մարդու իրավունքներին, սոցիալական մեղիային, [սոցիալ-տնտեսական խնդիրներին](#), ազգային փոքրամասնություններին և հատուկ կարիքներ ունեցող մարդկանց: Օրագրերից շատերը նախատեսում էին կազմակերպել [ֆլեշմոբեր](#), սպորտային և համայնքային միջոցառումներ, ձեռքի աշխատանքի խմբակներ, [ռոք համերգ](#) և այլն: Ֆինանսավորված ծրագրերի շնորհիվ Հայաստանի ինը մարզերից և Երևանից առնվազն 300 երիտասարդ հնարավորություն կստանա իրականացնել փոքրածավալ ծրագրեր՝ ներգրավելով ավելի քան 1000 երիտասարդի ամբողջ երկրից: Հայաստանյան տպագիր մամուլը, ինտերնետային և հեռուստատեսային ՋԼՄ-երը արդեն իսկ պատրաստել են Երիտասարդական Բանկի գործունեությունը լուսաբանող ավելի քան 50 հոդված և տեսանյութ:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԲԱՆԿԵՐԸ ՉԵՆ ՄԱՀՄԱՆԱՓԱՎՈՒՄ ՄԻԱՅՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՏՐԱՄԱՐԴՄԱՄԲ

Երիտասարդական Բանկ կոմիտեները չեն սահմանափակում իրենց աշխատանքը միայն դրամաշնորհների տրամադրմամբ: Փոխարենը, նրանք գիտեն իրենց մասնակցության կարևորությունը տեղական խնդիրների լուծման գործում և այդ նպատակով հայթայթում են լրացուցիչ գումարներ: 2011-ի ձմռան ընթացքում Արմավիրի Երիտասարդական Բանկը դիմեց և ստացավ 4500 ԱՄՆ դոլար «Բըրնսի ընթրիք» բարեգործական միջոցառման կողմից, որն ամեն տարի անցկացվում է Բրիտանական Գործարարության Պալատի կողմից Երևանում: Արմավիրի Երիտասարդական Բանկն այս գումարով ձեռք բերեց ֆիզիկական վերականգնողական սարքավորումներ և նվիրեց դրանք հատուկ կարիքներ և խոսքի խնդիրներ ունեցող երեխաների գիշերօթիկ դպրոցին: Բացի այդ, Եղեգնաձորի ԵԲ-ը մասնակցել է Բրիտանական խորհրդի «Ակտիվ քաղաքացի» ծրագրի դրամաշնորհային մրցույթին և շահել 4440 ԱՄՆ դոլար: Այս գումարին ավելացավ նաև 250 ԱՄՆ դոլար Եվրասիա Համագործակցություն Հիմնադրամի Երիտասարդական Բանկ ծրագրի ֆոնդերից, ինչպես նաև 170 ԱՄՆ դոլար Եղեգնաձորի քաղաքապետարանի կողմից: Գումարը ծառայեց «Իմ քաղաքն իմ տունն է» ծրագրի իրականացմանը: Որպես ծրագրի մի մաս՝ ավագ դպրոցի աշակերտները մասնակցեցին բնապահպանական դասընթացների, ինչպես նաև տեղադրեցին 60 աղբարկղ Եղեգնաձորի տարբեր հատվածներում: Օրագրի արդյունքում Բրիտանական խորհուրդը Երիտասարդական Բանկի անդամ Նարեկ Բեգլարյանին ճանաչեց ծրագրի լավագույն մասնակից և հնարավորություն տվեց նրան մասնակցել մեկշաբաթյա փոխանակման ծրագրի Մեծ Բրիտանիայում:

Այս օրինակները ոգևորում են Երիտասարդական Բանկի մյուս անդամներին իրականացնելու ավելի լայնամասշտաբ նախաձեռնություններ և համատեղել դոնորների կողմից տրամադրված ռեսուրսները սեփական ուժերով ձեռք բերված գումարների հետ:



Ռոք համերգ՝ ֆինանսավորված Արարատի ԵԲ կողմից



Երևանի ԵԲ ֆինանսավորեց «GREEN? GO!» ֆլեշմոբը՝ խրախուսելով ճանապարհային անվտանգությունը



Եղեգնաձորի ԵԲ անդամները աղբարկղեր են տեղադրում



Արմավիրի ԵԲ անդամները գնված սարքավորումները հասցնում են դպրոց



MINISTRY FOR FOREIGN AFFAIRS OF FINLAND



**REAL MONEY
REAL LIVES
REAL CHANGE**

ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ՓՈՐՁԻ ՓՈՒՍԱՆԱԿՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՂԲԵՋԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԵՏ

Ապրիլի 17-ից 20-ը Երիտասարդական Բանկի 10 անդամներ և ԵԲ ծրագրի 2 աշխատակիցներ մասնակցեցին ԵՀՀ Վրաստանի տարածաշրջանային «Lessons learnt from The 1st time voters» ծրագրին և հանդիպեցին Աղբբեջանի իրենց գործընկերներին: Երիտասարդական Բանկերի կողմից իրականացվող «1st Time Voters» ծրագիրը Վրաստանի համայնքներում խրախուսում է մի շարք փոքր նախագծեր, որոնց հիմնական նպատակն է բարձրացնել երիտասարդների իրազեկվածությունը և մասնակցությունը առաջիկա ընտրություններին: Եզրափակիչ կոնֆերանսի ընթացքում կիրառվեցին մի շարք ինտերակտիվ մեթոդներ, որոնց շնորհիվ Հայաստանից, Վրաստանից և Աղբբեջանից ժամանած երիտասարդները միմյանց հետ կիսեցին իրենց փորձն ու գիտելիքները:



3 երկրների ԵԲ անդամները տոնում են միացյալ հանդիպման ավարտը

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎՎԱՍԻՒՅ 3 ԵՐԿՐՆԵՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻԱՍԻՆ

Getting Involved! Երիտասարդական ծրագիրը ֆինանսավորվում է Շվեդական միջազգային զարգացման գործակալության (SIDA), Թեոդոր Հոյս-Քոլիզ Հիմնադրանի և Եվրասիա Համագործակցություն Հիմնադրամի կողմից: Ծրագրի շրջանակներում 29 երիտասարդ Հայաստանից, Աղբբեջանից և Վրաստանից հավաքվեցին միասին՝ ծանոթանալու ծրագրերի մշակմանը և կամավորությանը: Հարավային Կովկասի 3 երկրներից ընտրված մասնակիցները հրավիրվեցին Վրաստան, որտեղ միասին անցկացրին 9 օր՝ ծանոթանալով իրար և մշակելով համատեղ ծրագրեր: Մասնակիցները հաջողությամբ փորձարկեցին իրենց մինի ծրագրերը Շինդիսի գյուղում և Թբիլիսիում: Դրանք հիմնականում ուղղված են տեղական հիմնախնդիրների լուծմանը, ինչպիսիք են աղտոտման, երթևեկության կանոնների, տաքսու գների, ծառայությունների որակի և այլ խնդիրները: Getting Involved! ծրագիրը նպաստում է երիտասարդների հմտությունների զարգացմանը՝ մղելով նրանց դառնալ նախաձեռնող թե՛ իրենց անձնական և թե՛ հասարակական կյանքում: Շեշտը դրվում է մասնակիցների անձնական զարգացման և նրանց կառավարելու ունակությունների վրա: Առաջիկայում երիտասարդները կունենան ևս 2 անգամ հանդիպելու հնարավորություն:



GI 2011-ի մասնակիցները Հայաստանից, Վրաստանից և Աղբբեջանից ծանոթանում են միմյանց

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԲԱՆԿԵՐՆ ԱՋԱԿՑՈՒՄ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՏԱՐԱՍՄԱՆԸ

Երիտասարդական Բանկերը հանդես են գալիս որպես մի շարք հաջողված նախաձեռնությունների տարածող: Օրինակ՝ ԵԵՀ Եվրոպական ծրագրի արդյունքների տարածումը (ծրագիրն իրականացվում է Շվեդական միջազգային զարգացման գործակալության (SIDA) միջոցներով): 2010-ին ԵՀՀ-ը հրատարակեց «Բարև Եվրոպա» համապարփակ գիրքը, որը նախատեսված է շարքային հայ ընթերցողի համար և գրված է մատչելի լեզվով: Հայաստանի գյուղական բնակչության, այդ թվում՝ ուսուցիչների, գրադարանավարների, ուսանողների շրջանում ԵՄ և Եվրոպական գործընթացների վերաբերյալ տեղեկատվության տարածման նպատակով Երիտասարդական Բանկերը կազմակերպեցին «Բարև Եվրոպա» գրքի շնորհանդեսը՝ տարածելով այն իրենց համայնքներում և մարզերում: ԵԲ կողմից ՀՀ տարբեր մարզերում անցկացված 10 շնորհանդեսներին մինչ օրս մասնակցել է 300 մասնակից: Միևնույն ժամանակ, ամռանը ԵՀՀ -ը հանդես կգա փոքրածավալ դրամաշնորհային մրցույթի նոր փուլի մեկնարկով, որը նվիրված կլինի Եվրոպական երիտասարդական արժեքների տարածմանը: ԵՀՀ-ը մտադիր է ֆինանսավորել 20 փոքրածավալ ծրագիր:



ԵԲ անդամները աջակցում են երիտասարդների շրջանում «Բարև Եվրոպա» գրքի տարածմանը



MINISTRY FOR FOREIGN AFFAIRS OF FINLAND



**REAL MONEY
REAL LIVES
REAL CHANGE**

ՆՈՐ ԱԿՏԻՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ, ՆՈՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿԱԶՄՈՒՄ

«Երիտասարդական Բանկ» գաղափարն ունի ներքին բազմապատկիչ ազդեցություն, քանի որ այն ներգրավում է նորանոր երիտասարդների և երիտասարդական կազմակերպությունների: Այս գարնանը Հայաստանի Երիտասարդական Բանկը հավաքագրեց 35 նոր անդամներ ողջ Հայաստանից: Մինևույն ժամանակ, բացվեց նոր Երիտասարդական Բանկ Կոտայքի մարզում:

Նոր անդամներին Երիտասարդական Բանկի աշխատանքներին ծանոթացնելու համար կազմակերպվեց եռօրյա սեմինար, որի ընթացքում ԵԲ փորձառու անդամները ներածական դասընթացներ անցկացրեցին նորեկների համար: Եռօրյա հանդիպման ժամանակ ԵԲ նոր սերունդը ծանոթացավ կարիքների գնահատման, ծրագրերի մշակման և դրամաշնորհների տրամադրման մեթոդներին: Սեմինարն ընդգրկում էր նաև լրացուցիչ թեմաներ՝ նվիրված թիմային աշխատանքին, որոշումների կայացման թափանցիկությանը և մարդու իրավունքներին: Բացի այդ, տեղի ունեցավ տարբեր ԵԲ խմբերի, այդ թվում՝ Վրաստանի և Թուրքիայի Երիտասարդական Բանկերի միջև փորձի փոխանակում: Սեմինարի ավարտից հետո կարճ ժամանակ անց ԵԲ նոր անդամները պատրաստեցին PR նյութեր, անցկացրեցին համայնքային հետազոտություններ, ինչպես նաև իրենց համայնքներում հայտարարեցին նոր դրամաշնորհային մրցույթներ:



ԵԲ անդամները ներկայացնում են Մարդու իրավունքների թեմայով թրեյնինգի արդյունքները

ԵՀՀ Երիտասարդական Բանկ ծրագրի անսպասելի արդյունքներից էր Երկիր Մեդիա հեռուստաընկերության պատրաստած «Անկախության սերունդ» հատուկ հաղորդումը՝ նվիրված Երիտասարդական Բանկի գործունեությանը: Երկիր Մեդիան այն հեռարձակեց ոչ միայն Հայաստանում, այլև իր արբանյակի միջոցով ամբողջ աշխարհի հայության համար:

Հայաստանում Երիտասարդական Բանկի գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն ստանալու համար կապվեք մեզ հետ:

Եվրասիա Համագործակցություն Հիմնադրամ

Զարոբյան փ. 56, ք. Երևան, Հայաստան
Հեռ. 58-60-95, 58-60-96

www.youthbank.am, www.epfound.am

Էլ. Փոստ youthbank@epfound.am



REAL MONEY
REAL LIVES
REAL CHANGE